# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ N 10-Ա

<<27>> ԱՊՐԻԼ 2017 ԹՎԱԿԱՆԻ

## ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել համայնքի ավագանու չորրորդ նիստի հետևյալ օրակարգը.

1.Դիտավան համայնքի ղեկավարի 2017 թվականի առաջին եռամսյակի բյուջեի հաղորդումը:

2. Դիտավան գյուղական համայնքի 2017 թվականի բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ավելացման և ծախսերի մասին:

3. Դիտավան համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 1.83761 հա ընդհանուր մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարելու, համաձայնություն տալու, ինչպես նաև մեկնարկային գին հաստատելու մասին:

4. Դիտավան համայնքի 2017 թվականի բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին:

5. Դիտավան համայնքի 2017 թվականի բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին:

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Մանուչարյան Ֆելիքս

Բայրամյան Միքայել

Մանուչարյան Սարիբեկ

Մարության Կարեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Յակոբ Սարիբեկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ N 11-Ա

<<27>> ԱՊՐԻԼ 2017 ԹՎԱԿԱՆԻ

## ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի առաջին մասի պահանջներով ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի 2017 թ.առաջին եռամսյակի բյուջեի հաղորդումը ըստ հավելված 1 և 2-ի:

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Մանուչարյան Ֆելիքս
Բայրամյան Միքայել
Մանուչարյան Սարիբեկ
Մարության Կարեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հակոբ Սարիբեկյան

(Կ. Տ.)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 12-Ն

<<27>> ԱՊՐԻԼ 2017 ԹՎԱԿԱՆԻ

## ԴԻՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Դիտավան գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասերի օտարումից համայնքի ֆոնդային բյուջե է վճարվել 2239286(երկու միլիոն երկու հարյուր երեսունինը հազար երկու հարյուր ութսուն) դրամ :

Դիտավան համայնքի ղեկավարը նշված ֆինանսական միջոցի օգտագործման վերաբերյալ ավագանու քննարկմանն է ներկայացրել կապիտալ ծախսերի ծրագրեր՝

1. Խմելու ջրագծի 320 գծմ d=125մմ ներքին ցանցի կապիտալ վերանորոգման համար համաֆինանսավորում:
2. Դիտավան համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման համար կապիտալ ներդրում:
3. Մեքենաների և սարքավորումների ձեռք բերում:
4. Դիտավանի համայնքային կենտրոնի կապիտալ վերանորոգման ինչպես նաև ջրի բաքի և համապատասխան դետալների գնման և աշխատանքների իրականացում:
5. Վարչական սարքավորումների ձեռք բերում;

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետով ավագանին .

ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը, Դիտավան համայնքի 2017թվականի. բյուջեի ֆոնդային մասի հիմնական միջոցների եկամուտներն ավելացնել 2 239 286 (երկու միլիոն երկու հարյուր երեսունինը հազար երկու հարյուր ութսուն)դրամով, իսկ ծախսերը նախատեսել՝

1. 224 530 (երկու հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր երեսուն) դրամ

«Ընդհանուր բնույթի ծառայություններ»/բաժին 01, խումբ 06, դաս 01, հոդված 5113/ :

2. 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) դրամ « Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում »/բաժին 01, խումբ 01, դաս 01, հոդված 5113/
3. 1000000(մեկ միլիոն) դրամ «Գյուղատնտեսություն>> /բաժին 04, խումբ 02, դաս 01, հոդված 5112/ :
4. 300 000 (երեք հարյուր հազար) դրամ << Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում >>/բաժին 01, խումբ 01, դաս 01, հոդված 5122/ :
5. 264756 (երկու հարյուր վաթսուն չորս հազար յոթ հարյուր հիսունվեց) դրամ «Գյուղատնտեսություն>> /բաժին 04, խումբ 02, դաս 01, հոդված 5129/:

Ընդամենը 2 239 286 (երկու միլիոն երկու հարյուր երեսունինը հազար երկու հարյուր ութսուն)դրամ ծրագրերի իրականացմանը:

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Մանուչարյան Ֆելիքս

Բայրամյան Միքայել

Մանուչարյան Սարիբեկ

Մարության Կարեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հակոբ Սարիբեկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ N 13-Ա

<<27>> ԱՊՐԻԼ 2017 ԹՎԱԿԱՆԻ

## ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1.83761 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 67-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 1.83761 հա ընդհանուր մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն կից աղյուսակի:

2.Հայաստանի Հանրապետություն օրաթերթում և azdarar.am էլեկտրոնային

կայքում հողամասի աճուրդ վաճառքի պայմանների վերաբերյալ տալ հայտարարություն:

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Մանուչարյան Ֆելիքս

Բայրամյան Միքայել

Մանուչարյան Սարիբեկ

Մարության Կարեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հակոբ Սարիբեկյան

Առդիր.

ՀՀ Տավուշի մարզի Դիտավան համայնքի ավագանու
2017թ. ապրիլի 27-ի թիվ 13-Ա որոշման

## Դիտավան համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի աճուրդ-վաճառք

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը /հողատեսքը/ | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ1/ԳՀ-17/ | գ.Դիտավան | 11-026-0101-0044 | 18,376.1 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | Արդյունաբերական օբյեկտների | Արտադրություն | 1323079.2 | չկան |

*Դիտավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար* Ս.Ղազարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 14-Ն

<<27>> ԱՊՐԻԼ 2017 ԹՎԱԿԱՆԻ

## ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիտավան համայնքում Բրիտանական ,,Օքսֆամ,, կազմակերպության հայաստանյան զրասենյակի և ,,ՕքսԵՋեն,, հիմնադրամի կողմից իրականացվում է ,,Աջակցություն Հարավային Կովկասում համայնքների դիմակայունության բարելավման,, ծրագիրը: Ծրագրի գործընկերն է ,,Հույսի կամուրջ,, հասարակական կազմակերպությունը: Ծրագրի շրջանակներում Դիտավան համայնքում նախատեսվում է իրականացնել 320 գծմ խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ: Ծրագիրը իրականացնելու համար համայնքը պետք է կատարի ներդրում 224 530 (երկու հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր երեսուն) դրամի չափով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին

Որոշում է

Ծրագրին համայնքի ֆինանսական մասնակցությունը ապահովելու նպատակով Դիտավան համայնքի 2017թ. բյուջեի ֆոնդային մասից «Ընդհանուր

բնույթի ծառայություններ»/բաժին 01, խումբ 06, դաս 01, հոդված 5113/հատկացնել 224 530(երկու հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր երեսուն) դրամ :

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Մանուչարյան Ֆելիքս

Բայրամյան Միքայել

Մանուչարյան Սարիբեկ

Մարության Կարեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հակոբ Սարիբեկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 15-Ն

<<27>> ԱՊՐԻԼ 2017 ԹՎԱԿԱՆԻ

## ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել, որ անհրաժեշտություն է առաջացել իրականացնել համայնքային կենտրոնի պատերի և առաստաղների կապիտալ վերանորոգման, ինչպես նաև համայնքային կենտրոնում խմելու ջրի բաքի տեղադրման, դետալների գնման և շինմոնտաժային աշխատանքներ: Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին

Որոշում է

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը Դիտավան համայնքի 2017թ. բյուջեի ֆոնդային մասից « Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում »/բաժին 01, խումբ 01, դաս 01, հոդված 5113/

450 000 (չորս հարյուր հիսուն հազար) դրամ հատկացնել աշխատանքների իրականացման նպատակով:

| Կողմ (4) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
| --- | --- | --- |

Մանուչարյան Ֆելիքս

Բայրամյան Միքայել

Մանուչարյան Սարիբեկ

Մարության Կարեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Յակոբ Սարիբեկյան